ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի միջև 2022թվականի փետրվարի 8-ին ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-22/ԿԾ-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք.Երևան 23.12. **2022թ.**

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս ռեկտոր Դ.Գալոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Ս. Չունգուրյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, Պատվիրատուի և Կատարողի 2022 թվականի փետրվարի 8-ին ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-22/ԿԾ-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերի երկկողմանի համաձայնությամբ որոշեցին պայմանագրի N 1 հավելվածում կատարել փոփոխություններ և վերաշարադրել համաձայն համաձայնագրի հավելված N 1:

Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության գնման գործընթացի կազմակերպման 526-ն որոշման 56-րդ կետում շարադրված արհեստական փոփոխությունների շարքին:

1.2 Սույն փոփոխությունից հետո պայմանագրի գինը կկազմի **529.680** (հինգ հարյուր քսանինը հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՊՏՀ » ՊՈԱԿ	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 128	ք.Երևան, Նորք 2-րդ, 32տ.
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
900018001876	Հ/Հ 1930065750990100
ՀՎՀՀ՝ 01503224	ՀՎՀՀ 01505177
Ռեկտոր _____ Դ. Գալոյան	Տնօրեն _____ Ս.Չունգուրյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

08.02.2022 թ. կնքված
ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-22/ԿԾ-1 ծածկագրով պայմանագրի
23. 12. 2022թ. կնքված N 1 համաձայնագրի
հավելված N 1

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ , ԳՆՄԱՆ - ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Չափաբաժնի համարը	Ծառայության անվանում	Մանրամասն նկարագիրը	չափման միավորը	միավորի գինը / ՀՀ դրամ	քանակ	Ընդամենը / ՀՀ դրամ
1	տպագրական նյութի վերջնամշակման ծառայություններ <<Ամբերդ>> գիտական հանդես, կազմարարություն	<<Ամբերդ>> գիտական հանդես, կազմարարություն: 9 համար յուրաքնչյուրը 100 օրինակ, 200էջ, 12,5 մամուլ, A4	օրինակ	229.80	900	206,820
2	տպագրական նյութի վերջնամշակման ծառայություններ <<Ամբերդ>> գիտական հանդես, կազմարարություն	<<Ամբերդ>> գիտական հանդես, կազմարարություն: 6 համար յուրաքնչյուրը 150 օրինակ, 150էջ, 10 մամուլ, A4	օրինակ	180.00	900	162,000
4	տպագրական նյութի վերջնամշակման ծառայություններ <<<ՀՊՏՀ Բանբեր>> գիտական հանդես, կազմարարություն	<<<ՀՊՏՀ Բանբեր>> գիտական հանդես, կազմարարություն: 6 համար յուրաքնչյուրը 100 օրինակ, 200էջ, 12,5 մամուլ, A4	օրինակ	229.80	600	137,880
5	տպագրական նյութի վերջնամշակման ծառայություններ <<Միկրոտնտեսագիտություն. տնտեսություն և խնդիրներ>> ուսումնական ձեռնարկ, կազմարարություն	<<Միկրոտնտեսագիտություն. տնտեսություն և խնդիրներ>> ուսումնական ձեռնարկ, կազմարարություն: 210էջ, 13,1 մամուլ, A5:	օրինակ	229.80	100	22,980

Մատակարարման հասցեն	ք. Երևան, Նալբանդյան 128
Վճարման ժամկետը	Ծառայությունը ընդունելու օրվանից հաշված 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում:
Ծառայությունների մատուցման ժամանակացույցը	համաձայն պատվիրատուի պատվերների 7 աշխատանքային օրվա ընթացքում:
Պայմանագրի ժամկետը	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2022թ:
Այլ պայմաններ	Պատվիրատուի տպագրված նյութերի տեղափոխումը և բեռնաթափումը ինչպես նաև ծառայության վերջնական արդյունքի տեղափոխումը և բեռնաթափումը պատվիրատուի պահեստում իրականացնում է կատարողը իր միջոցներով հաշվին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՊՏՀ » ՊՈԱԿ	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 128	ք.Երևան, Նորք 2-րդ, 32տ.
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
900018001876	Հ/Հ 1930065750990100
ՀՎՀՀ՝ 01503224	ՀՎՀՀ 01505177
Ռեկտոր_____Դ. Գալոյան	Տնօրեն _____ Ս.Չունգուրյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ